«Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Պետական ֆինանսներ
Տևողություն՝	3 տարի
Իրականացման ժամանակահատված՝	2017-2019
Ընդհանուր բյուջե՝	10.0 մլն. եվրո
Բյուջետային աջակցություն՝	8 մլն. եվրո
Լրացուցիչ աջակցություն՝	2 մլն. եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ. Աջակցել Հայաստանում ֆիսկալ կառավարման թափանցիկությանն ու հաշվետվողականությանը:

Հատուկ նպատակ. Բարելավել Հայաստանում պետական ֆինանսական կառավարման համակարգի էֆեկտիվությունը, արդյունավետությունն ու թափանցիկությունը՝ միջազգային փորձին ու ստանդարտներին համապատասխան:

Բարեփոխումների շրջանակ.

- Ֆիսկալ կառավարման ստանդարտների մոտարկում միջազգային / ԵՄ ստնադարտներին ու գործարարությամբ զբաղվելու համար առավել բարենպաստ հարկային միջավայրի ներդրում ավելի լայն հարկային բազայով;
- Բյուջեի պատրաստման, կառավարման ու հաշվետվողականության համակարգի բարելավում միջազգային փորձին համապատասխան, որը կհանգեցնի բյուջեի ավելի ընդլայնված հաշվետվողականության, թափանցիկության ու էֆեկտիվության;
- Պետական միջոցների ֆինանսական հաշվապահական հաշվառման, գրանցման ու հաշվետվության, ինչպես նաև Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի իրականացման միջոցով Հայաստանի սեփական պետական հաշվապահական հաշվառման ստանդարտների արդիականացում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան;
- Պետական գնումների համակարգերկ բարելավում՝ մեկ աղբյուրի մեթոդի կիրառման նվազեցման ու դրա կառավարման հզորացման միջոցով;
- Ներքին վերահսկողության համակարգերի ուժեղացում՝ աջակցելով դրա կառավարմանն ու հաշվետվողականությանը՝ միջազգային փորձին ու ստանդարտներին համապատասխան;
- Առանցքային ֆիսկալ տեղեկատվության որակի ու հանրային հասանելիության բարելավում՝ դյուրացնելով քաղաքացիական հասարակության կողմից բյուջեի վերահսկողությունն ու քաղաքական

երկխոսությունը միջին քաղաքացու համար հասկանալի լեզվով տարեկան կտրվածքով քաղաքացիների բյուջեի պատրաստման միջոցով;

- Ազգային Ժողովի ու նրա Ֆինանսական հանձնաժողովի կողմից բյուջեի վերահսկողության դերի բարելավում՝ ի հաշիվ Ազգային Ժողովի բյուջետային գրասենյակի հաշվետվողականության ու տեխնիկական կարողության հզորացման իր գործառույթները միջազգային լավագույն փորձին համապատասխան իրականացնելու նպատակով;
- Արտաքին աուդիտի հզորացում՝ ի հաշիվ Վերահսկիչ պալատի կարողությունների հզորացման՝ արտաքին աուդիտի գործողությունները, մասնավորապես՝ կատարողականի աուդիտի և անկախության ոլորտներում, իրականացնելու նպատակով: